Հովհաննես Շիրազ

Մայրս հաճախ հոգուս մեջ

Մայրս հաճախ հոգուս մեջ,
Հոգով այցի է գալիս,
Եվ սաստում է ինձ անվերջ՝
- Ջուր ես մահս դեռ լալիս:

Տես՝ ոգիս հար կը հառնի,
Մահս մարմնիս մահն է զուտ,
Մայրդ այն ժամ կը մեռնի,
Երբ մեռցվի մայր լեզուդ:

Ես կը մեռնեմ, երբ հանկարծ
Մայր Արաքսը ցամաքի,
Երբ Մասիսն էլ քո պաշտած
Փոխվի ձոր ու խանդակի:

Ես կը մեռնեմ, երբ Վանա
Ծովից մնա մի կաթիլ,
Արարատից չմնա
Հող ու ձյունի մի կաթիլ:

Կերդվեմ վշտով Եղեռնի,
Անմեղ լեզվով Հայոց սուրբ՝
Մայրդ այն ժամ կը մեռնի,

Երբ մոռացվի հայ լեզուդ…